Մրցակցային քաղաքականությունը և ԱՀԿ-ն

ԵՊՀ, Տնտեսագիտության ֆակուլտետ, Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոն, տ.գ.թ. Գրիգոր Ռաֆայելի Հայրապետյան

Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում, Գիտական հոդվածների ժողովածու, ՀՀ ԳԱԱ Հրատարակչություն, Երևան 2007թ., էջ 431-434

Հայաստանի պես փոքր երկրները համաշխարհային տնտեսության մեջ միշտ եղել են ավելի խոցելի: Այս փաստը հիմնականում պայմանավորված է ոչ միայն այն հանգամանքով, որ նրանց տնտեսական գործունեության մեծ մասը բաժին է ընկնում արտաքին առևտրին այլև, որ նրանք չունեն բավարար տնտեսական ուժ՝ գլոբալացման գործընթացը կառավարող պայմաններ հաստատելու կամ կանոններ ստեղծելու համար:

Փոքր երկրների համար գլոբալացումը բերում է հնարավորություններ, ինչպես նաև ռիսկեր: Գլոբալ տնտեսությունը փոքր երկրներին կարող է հնարավորության տալ արագ հարմարվել փոփոխվող պայմաններին և ավելի հեշտությամբ որոշել իրենց տնտեսական զարգացման ռազմավարական քաղաքականությունը: Այսպիսով, հարց է առաջանում, թե ինչ պայմաններում փոքրությունը կարող է հանդիսանալ խոչընդոտ և ինչ պայմաններում՝ որպես խթանիչ գործոն: Այս հարցի շուրջ կան բազմաթիվ հետազոտություններ: Մասնավորապես՝ Դ. Բրուտիգամը և Մ. Վուլքոքը իրենց աշխատանքում ցույց են տվել, որ փոքր երկրները շարունակում են մնալ խոցելի գլոբալ տնտեսությունում, սակայն լավ զարգացած տեղական ինստիտուցիոնալ համակարգը կարող է մեղմել այդ խոցելիությունը[1]:

Կարծում ենք, որ բացի տեղական ինստիտուցիոնալ համակարգից Հայաստանի պես փոքր երկրների խոցելիությունը համաշխարհային տնտեսությունում կմեղմացնի նաև վերազգային ինստիտուցիոնալ համակարգը: Ավելին, երկրների մրցակցային քաղաքականությունը կազմելիս՝ հաշվի առնելով բազմակողմ մրցակցային քաղաքականությունը, մեր կարծիքով, որպես վերազգային ինստիտուտ պետք է ընտրվի ԱՀԿ-ն:

[1] Deborah Brautigam and Michael Woolcock (2001) “Small States in a Global Economy”

Մրցակցային քաղաքականություն: Համաձայն Ջ. Ռոբինսոնի՝ մենք ականատես ենք լինում դանդաղ մենաշնորհացման և խոշոր ձեռնարկությունների զարգացման գործընթացի[2]: Ըստ նրա, ձեռնակության չափերի մեծացման կամ մենաշնորհացման արդյունավետ օգուտները հարստության ոչ ճիշտ բաշխման վտանգի պատճառով պետք է հավասարակշռվեն: Ներկայումս խոշոր ձեռնարկությունները վերազգային ընկերություններ են, որոնք համարվում են ՕՈՒՆ-ի գլխավոր «մատակարարները»: Հարկ է նշել, որ վերջին տարիներին միջազգային առևտրում դիտարկված աճի հիմնական գործոնը համարվում է ՕՈՒՆ-երը: Չնայած վերազգային ընկերությունների առաջացրած արդյունավետության օգուտներին, դրանց կողմից փոխանցված նորագույն տեխնոլոգիաներին և նոու-հաուներին, դրանց գործառնությունները շատերի կողմից կասկածելի է դիտարկվում: Վերազգային ընկերությունների չափերը, գործառնությունների լայն սփռվածությունը և ֆինանսական ու մարդկային ռեսուրսներով հագեցվածությունը կարող են խանգարել տեղական ձեռնարկությունների զարգացմանը, անտեսել տեղական սպառողի շահերը և նույնիսկ սպառնալ երկրի ինքնիշխանությանը: Սովորաբար այս անհանգստությունները հիմնականում բարձրացվում են զարգացող երկրների կողմից, սակայն դրանք չեն սահմանափակվում զարգացող երկրներով: Կարտելների և միաձուլումների ազդեցությունը սպառողի բարեկեցության վրա երկար ժամանակ քննարկվել և հետազոտվել են ԱՄՆ-ում և ԵՄ երկրներում[3]:

Մրցակցային քաղաքականության հիմնական նպատակը պետք է լինի պահպանել և խթանել առևտրից ու ներդրումներից ստացվող արդյունավետության օգուտները, սակայն միևնույն ժամանակ սահմանափակել արդարության և բարեկեցության վրա ազդող հնարավոր խնդիրները:

Շատ երկրներ ձեռնարկությունների մենաշնորհային դիրքը սահմանափակելու համար ստեղծում են ինստիտուտներ և կիրառում համապատասխան քաղաքականություն: Այսպիսի քաղաքականության հիմնական նպատակն է սպառողի բարեկեցության կամ շահերի պաշտպանությունը: Ընդունված է համարել, որ մրցակցությունն ապահովում է սպառողների շահերի

[2] Robinson J. (1933) “The Economics of Imperfect Competition”, London, Macmillan.
[3] Lloyd P. J. (1998) “Multilateral rules for international competition law?”, World Economy, 21, pp.1129-1149.

խթանում և պաշտպանում: Հետևաբար, ներկայիս գլոբալ աշխարհում գոյություն ունի մրցակցային քաղաքականության երկու կողմ: Առաջինը, դա շուկայում խոշոր ձեռնարկությունների կողմից իրենց դիրքի չարաշահման կանխումն է, իսկ մյուսը՝ ձեռնարկությունների մրցակցության և արդյունավետ գործառնություններ կատարելու խոչընդոտների վերացումը կամ նվազեցումն է: Այստեղ հարկ է նշել, որ բազմակողմ մրցակցային քաղաքականության վերաբերյալ ժամանակակից քննարկումներում մեծ ուշադրություն է դարձվում երկրորդի վրա: Այստեղ խնդիրը կայանում է արդյունավետության և արդարության անխուսափելի բախման մեջ: Զարգացող երկրներն առևտրի և ներդրումների վերահսկման միջոցով փնտրում են ճանապարհներ ու միջոցներ զարգացմանն օժանդակելու համար, մինչդեռ օտարերկրյա ձեռնարկությունները ճանապարհներ ու միջոցներ են փնտրում որոնց միջոցով կարող են ապահովել իրենց գործառնությունների արդյունավետությունը:

Բազմակողմ մրցակցային քաղաքականություն: Վերջին տարիներին մի շարք երկրների մրցակցությունը կարգավորող մարմինների միջև իրականացվում է ավելի սերտ համագործակցություն և գործունեության կոորդինացում: Վառ օրինակներ են երկկողմանի համաձայնագրերը ԱՄՆ-ի ու ԵՄ երկրների միջև և տարածաշրջանային համաձայնագրերը ԵՄ, Հյուսիսամերիկյան ազատ առևտրի ասոցացիայի (North American Free Trade Association, NAFTA) ու Mercosur-ի շրջանակներում: Մի շարք երկրներ, այդ թվում նաև զարգացող, ընդունել են ազգային մրցակցային օրենքներ: Սակայն, երկկողմանի համաձայնագրերի մեծ մասը Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (Organization for Economic Cooperation and Development, OECD) անդամ երկրների միջև է: Ամեն դեպքում զարգացած երկրների միջև երկկողմանի համաձայնագրերը հարմար չեն լինի զարգացող երկրների համար, քանի որ զարգացած և զարգացող երկրների մոտ նպատակների ու զարգացման մակարդակների միջև զգալի տարբերության կա: Այնուամենայնիվ, կան այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են միջազգային շուկայի հասանելիությունը, միջազգային կարտելները, որոնց շրջանակներում բազմակողմ մրցակցային քաղաքականության համաձայնագրերը անհրաժեշտ են դառնում: Այս համատեքստում ԱՀԿ-ն չի կարող ապահովել վերը նշված խնդրի լուծումը, քանի որ նրա իրավասությունները սահմանափակվում են միջազգային առևտրով, այլ ոչ թե

ներդրումներով: Կազմակերպությունը կարող է վարել առևտրային բանակցություններ անդամ երկրների կառավարությունների հետ, սակայն նա չի կարող բանակցություններ վարել մասնավոր վերազգային ընկերությունների հետ: Այս մոտեցումը իրականում կարող է շատ սահմանափակ լինել մի քանի պատճառներով: Առևտրի զգալի մասը նույնպես ապահովվում է մասնավոր ձեռնարկությունների, մասնավորապես՝ վերազգային ընկերությունների կողմից, սակայն այս փաստը չի բացառում ԱՀԿ շրջանակներում բանակցող երկրների կառավարության կողմից առևտրային քաղաքականության մշակմանն ու կիրառմանը: Մյուս կողմից, երկրների կառավարությունը նաև մշակում և կիրառում է ներդրումային քաղաքականությունը: ԱՀԿ-ին ընդդիմադիրներից շատերը անտեսում են առևտրի, ՕՈՒՆ-ի և մրցակցության փոխկապակցվածությունը: Կարիք չկա խուսափել այն փաստից, որ առևտուրը, ՕՈՒՆ-ը ու մրցակցությունը փոխկապակցված են և դրանցից մեկի իրավական կարգավորումը անխուսափելիորեն ազդում է մյուսների վրա:

Այսպիսով, հարց է առաջանում՝ արդյո՞ք ԱՀԿ-ն ամենահարմար մարմինն է, որը պետք է վճռի բազմակողմ մրցակցային քաղաքականության հարցերը: Ավելին, հաստատությունը կարող է ի վիճակի լինել վճռել, թե արդյոք ճիշտ են գործում ազգային կառավարությունները ու մրցակցությունը կարգավորող համապատասխան մարմինները: ԱՀԿ-ն այն միջազգային ինստիտուտներից է, որի որոշումները պարտավորեցնող են և կարող են արդյունավետ կիրառվել:

Ոչ բոլոր տեղական պահանջներն են (Local Content Requirements, LCRs) խթանում տնտեսական զարգացման նպատակներին: Դրանք ազդում են առևտրի վրա և կարող են վնասակար ազդեցություն ունենալ ձեռնարկության արդյունավետ գործունեության վրա: Այսպես, օտարերկրյա ձեռնարկությունները տեղական պահանջների պատճառով արտահանման գործունեության միջոցով կարող են ընտրել ծառայությունների շուկան, այլ ոչ թե ՕՈՒՆ-երը: Շատ վերազգային ընկերություններ կնախնտրեն ձեռք բերել միջանկյալ ապրանքներ տեղական մատակարարներից, քանի որ այդ դեպքում նրանք կնվազեցնեն տրանսպորտային ծախսերը: Սակայն այստեղ խնդիրը կայանում է այնպիսի մատակարարների առկայության և կազմակերպման մեջ, որոնք պարունակում են փնտրման ծախսեր: Տեղական պահանջներն օտարերկրյա ձեռնարկությունների համար դրդապատճառներ կստեղծեն որպեսզի նրանք կրեն այդ ծախսերը և

նպաստեն տեղական միջանկյալ ապրանքների մատակարարների ստեղծմանը: Ավտոմեքենաների արտադրության ոլորտում Ճապոնական վերազգային ընկերությունները, օրինակ՝ Հնդկաստանում, հաստատել են միջանկյալ ապրանքների տեղական մատակարարներ և արտադրության համար տրամադրում են նրանց նոու-հաուներ:

Բազմակողմ մրցակցային քաղաքականությունը և մրցակցությունը: Գրականության մեջ միջազգային շուկան համարվում է մրցակցային, երբ ձեռնարկությունների միջև մրցակցային հարաբերությունները չեն թուլանում կառավարության կամ մասնավոր հակամրցակցային գործունեությամբ[4]: Պ. Լոյդը իր աշխատանքում դիտարկում է այն պայմանները, որոնք անհրաժեշտ են միջազգային մրցակցության համար: Ըստ նրա՝ օտարերկրյա ձեռնարկությունների համար շուկայի հասանելիությունն անհրաժեշտ, սակայն բավարար պայման չէ: Օտարերկրյա ներդրումների ազատությունը, օտարերկրյա ձեռնարկությունների ազգային վարվելակերպը և տեղական ձեռնարկությունների «անարդար» առավելության բացակայությունը նույնպես էական դեր ունեն այս գործընթացում: Եվ վերջապես ազգային և բազմակողմ մրցակցային քաղաքականությունը կարող է խթանել միջազգային ու տեղական շուկաների մրցունակությանը: Ա. Զամպետին և Պ. Սաուվը, ի տարբերություն Պ. Լյոդի, նշում են, որ տեղական մրցակցային քաղաքականությունը ոչ միշտ է ապահովում միջազգային, ինչպես նաև տեղական շուկայի մրցունակություն[5]:

Այսպիսով, եթե հետագայում ԱՀԿ-ն պետք է վճռի բազմակողմ մրցակցային քաղաքականությունը, ապա նրան անհրաժեշտ կլինի բավական մեծ քանակությամբ ռեսուրսներ, որպեսզի ի վիճակի լինի տարբերել և ամբողջությամբ հետազոտել հնարավոր իրավիճակները: Եթե մրցակցային քաղաքականությունը ԱՀԿ-ի շրջանակներում պետք է սահմանափակվի միայն կորդինացնող և խորհրդատվական դերով, ապա պետք է որոշվի պատժամիջոցների սահմանման և դրանց կիրառման հնարավորությունները: ԱՀԿ-ն ունի բավական ներուժ և ռեսուրսներ, որպեսզի կիրառի համապատասխան պատժամիջոցներ:

[4] W. J. Baumol, J. C. Panzar and R. D. Willig (1982) “Contestable Markets and the Theory of Industrial Structure”, San Diego, Harcourt Brace.
[5] A. B. Zampetti and P. Sauvé (1996) “Onwards to Singapore: the international contestability of markets and the new trade agenda”, World Economy, 19, pp. 333-343.

Ներկայիս ԱՀԿ բազմակողմ առևտրային հարաբերությունների կարգավորման դերը ենթադրում է, որ հավանական է նա լինի այն համապատասխան մարմինը, որը կարող է իր վրա վերցնել բազմակողմ մրցակցային քաղաքականության ապագա զարգացման պատասխանատվությունը:

Շատ քիչ թվով վերլուծություններ կան նվիրված Հայաստանի մրցակցային հիմնախնդիրներին: Այսպես, Համաշխարհային բանկի կողմից կատարված Առևտրի ախտորոշման հետազոտությունում ուսումնասիրվում է Հայաստանի արտաքին առևտրի ընդհարձակման սահմանափակումները[6]: USAID-ի (United States Agency of International Development, USAID) մրցակցությանը նվիրված զեկույցում մանրամասն վերլուծվել է ՀՀ մրցակցային միջավայրը, սակայն այստեղ չեն ներկայացվել այն գործոնները, որոնք զսպում են մրցակցության զարգացմանը[7]: Ֆինանսական շուկային նվիրված մեկ այլ վերլուծությունում բացահայտվել են ՀՀ ֆինանսական շուկայի թերզարգացվածության հիմնական հիմնախնդիրները[8]:

Հայաստանի Հանրապետությունում մրցակցային միջավայրի պաշտպանության համար առաջին իրական ինստիտուցիոնալ լուծումը տրվեց 2000թ., երբ ընդունվեց «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը և 2001թ. ստեղծվեց մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով: Հայաստանում մրցունակ շուկա հաստատելու իրավասությունը տրված է Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովին: Հանձնաժողովն իր սակավ ռեսուրսներով և փորձով արդյունավետ չի կարողանում աշխատել: Ավելին, Հանձնաժողովը չունի համապատասխան ուժ իր որոշումները գործադրելու համար: Հանձնաժողովի որոշումները կարող են կիրառվել միայն դատական համակարգում գործը շահելուց հետո, իսկ այս դեպքում դատարանների արտաքին ճնշումներին ենթարկվելու հավանականությունը շատ մեծ է:

Այսպիսով, ինչպես նկատում ենք, Հայաստանում դեռևս չի լուծվել արդյունավետ մրցակցային քաղաքականության ընդունման և կիրառման

6 “Trade Diagnostic Study.” World Bank, 2002.
7 Armenia Competitiveness Assessment, USAID/Yerevan , 2004.
8 Mu, Yibin, Ramin Shojai, Serap O. Gonulal and Lia Aghamyam, 2004. “Armenia Banking and Insurance Sector: Key Issues and Recommendations for Development,”

հիմնախնդիրը: Ավելին, դեռևս չի լուծվել տեղական շուկայում մրցակցության ապահովման գերակա խնդիրը: Մյուս կողմից, համաշխարհային տնտեսության զարգացմանը զուգընթաց ներկայումս արդեն նկատվում է բազմակողմ մրցակցային քաղաքականության անհրաժեշտությունը: Այս առումով, առանց արդյունավետ ազգային մրցակցային օրենքի շատ դժվար կլինի դիմակայել այլ երկրների միջև զարգացող մրցակցային համագործակցությանը և գործունեության կոորդինացմանը: Այստեղ հարկ է նշել. որպեսզի ազգային մրցակցային օրենքը լինի արդյունավետ, ապա դա պետք է մշակվի և կիրառվի ելնելով տեղական պահանջներից (LCR's):

Օգտագործված գրականություն

1. Deborah Brautigam and Michael Woolcock (2001) "Small States in a Global Economy"
2. Robinson J. (1933) "The Economics of Imperfect Competition", London, Macmillan.
3. Lloyd P. J. (1998) "Multilateral rules for international competition law?", World Economy, 21, pp.1129-1149.
4. W. J. Baumol, J. C. Panzar and R. D. Willig (1982) "Contestable Markets and the Theory of Industrial Structure", San Diego, Harcourt Brace.
5. A. B. Zampetti and P. Sauvé (1996) "Onwards to Singapore: the international contestability of markets and the new trade agenda", World Economy, 19, pp. 333-343.
6. "Trade Diagnostic Study." World Bank, 2002.
7. Armenia Competitiveness Assessment, USAID/Yerevan , 2004.
8. Mu, Yibin, Ramin Shojai, Serap O. Gonulal and Lia Aghamyam (2004) "Armenia Banking and Insurance Sector: Key Issues and Recommendations for Development"